

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**Հակոբյան Աննա Աշոտի**

**Դատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր.  
պատմատեսական և իրավական վերլուծություն**

ԺԲ.00.01- «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն,  
պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ  
իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**Երևան - 2018**

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

**Акобян Анна Ашотовна**

**Судебный прецедент как источник права:  
историко-теоретический и правовой анализ**

**АВТОРЕФЕРАТ**

диссертации на соискание ученой степени кандидата  
юридических наук по специальности  
12.00.01- «Теория и история государства и права, история  
государственных и правовых учений»

**Ереван – 2018**

**Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության,  
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական խորհրդի նիստում  
Գիտական ղեկավար՝**

իրավաբանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր **Գ. Հ. Սաֆարյան**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝** իրավաբանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր **Վ. Վ. Ստեփանյան**

իրավաբանական գիտությունների  
թեկնածու, դոցենտ **Վ. Ա. Օհանյան**

**Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019թ. հունվարի  
29-ին, ժամը 13<sup>00</sup>-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-  
ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք.  
Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական  
համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2018թ. դեկտեմբերի 18-ին:

**Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,  
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ՝**

**Ա. Ա. Մանասյան**

**Тема диссертации утверждена на заседании ученого совета Института  
философии, социологии и права НАН РА**

**Научный руководитель:**

доктор юридических наук,  
профессор **Г. Г. Сафарян**

**Официальные оппоненты:**

доктор юридических наук,  
профессор **В. В. Степанян**  
кандидат юридических наук,  
доцент **В. А. Оганян**

**Ведущая организация: Российско-Армянский университет**

Защита состоится 29 января 2019г. в 13<sup>00</sup> часов на заседании специа-  
лизированного совета 001 по юриспруденции ВАК РА при Ереванском  
государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных  
работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 18 декабря 2018г.

**Ученый секретарь специализированного совета,  
кандидат юридических наук, доцент**

**А. А. Манасян**

### **Ատենախոսության ընդհանուր բնութագիրը**

**Թեմայի հետազոտության արդիականությունը.** Յանկացած իրավական պետության և հատկապես քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացն անխզելիորեն կապված է պետության և անհատի փոխադարձ հարաբերությունների արդարացի կարգավորման հիմնախնդրի հետ: Հասարակական կյանքում իշխանությունների տարանջատումը՝ որպես հիմնարար սահմանադրական սկզբունք, ենթադրում է միասնական պետական իշխանության բաժանում երեք հարաբերականորեն ինքնուրույն և անկախ իշխանությունների՝ օրենսդիր, գործադիր և դատական, որտեղ համապարտադիր կերպով ճանաչվում է իրավունքի (իրավական օրենքի) գերակայությունը ոչ միայն հասարակության անդամների, այլ նաև պետության համար, միաժամանակ սահմանափակելով պետական իշխանությունն իրավունքով: Իշխանությունների տարանջատման սկզբունքի վերաբերյալ ներկա ժամանակաշրջանի պատկերացումները, մասնավորապես՝ միասնական պետական իշխանության բաժանումն օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի, հիմնվում են ֆրանսիացի գրող, իրավագետ և փիլիսոփա Շառլ Լոփ Մոնտեսքյուի կողմից իշխանությունների հավասարակշռության և առավել հստակ տարանջատման վերաբերյալ մեկնաբանությունների վրա: Նշված սկզբունքի էությունը կայանում է հետևյալում՝ օրենսդիր իշխանությունն օժտված է գերակայությամբ, քանի որ իր միջոցով են ստեղծվում մյուս իշխանությունները, և նա է սահմանում դրանց գործունեության իրավական հիմքերը: Գործադիր իշխանությունն իր մարմինների միջոցով կոչված է անմիջականորեն ապահովելու օրենսդիր իշխանության ընդունած իրավական նորմերի իրացումը: Նրա գործունեությունն իրականացվում է միայն օրենքի հիման վրա, օրենքին համապատասխան և դրա շրջանակներում: Դատական իշխանության գլխավոր առաքելությունն արդարադատության իրականացումն է և իրավունքի պաշտպանությունը: Իրավական պետության մեջ դատարանը միակ մարմինն է, որն իրականացնում է արդարադատություն: Այն անկախ է և ենթարկվում է միայն օրենքին:

Յուրօրինակ իրողություն է, որ իրավական պետությունը զարգացող երևույթ է, որի բովանդակությունը և տարրերը մշտապես նորանում են: Սակայն, որքան էլ փոփոխվում է վերջինիս բովանդակությունը, միևնույն է, իրավական պետությունը սերտորեն կապված է իրավունքի հետ և չի կարող գոյություն ունենալ առանց դրա: Օրենսդիրը նպատակ է հետապնդում վարքագծի կանոնների սահմանման միջոցով կարգավորել հասարակական կյանքի ամենակարևոր կողմերը, որոնք պետք է ներառեն հասարակական զարգացման օբյեկտիվ պահանջները, արտահայտեն հավասարություն և արդարություն, չհակասեն ժողովրդավարական հասարակության բարձրա-

գույն նպատակներին, քանզի օրենքը հանդիսանում է քաղաքակիրթ հասարակության մեջ ապրող մարդկանց ազատության արտահայտման, կազմակերպման և պաշտպանության բարձրագույն ձև:

Մինչդեռ, այդ ամենը կորցնում է իր նշանակությունը և ուժը՝ անկախ դատական իշխանության բացակայության պարագայում: Դատական իշխանությունը պետք է լինի անկախ, ինքնավար և առանձնացված: Դատական իշխանությունը դատարաններին պատկանող բացառիկ իրավունքն է հատուկ դատավարական կարգով (պատշաճ իրավական ընթացակարգով) իրավական վեճերը քննելու վերաբերյալ, ինչն իրականացվում է օրինականության, մարդու իրավունքների պաշտպանության, վերականգման կամ այլ նպատակով: Դատարանը ղեկավարվում է օրենքով և պետության անունից կայացնում դատական ակտեր՝ լուծելով կոնկրետ վեճեր: Եվ հենց դատական իշխանության գործառույթների հետևանքով է ձևավորվում դատական նախադեպի ինստիտուտը, որը նշանակում է դատական որոշումների որոշակիության և կանխատեսելիության ապահովում:

Պետության և իրավունքի տեսության և պատմության գիտությունը դատական նախադեպին տալիս է կենտրոնական դեր, քանի որ, ինչպես հարկ է նշել, իրավունքի հիմնական աղբյուր հանդիսացող օրենքը բավարար կերպով չի վերահսկում դինամիկ սոցիալական հարաբերությունները, և նման դեպքում լրացուցիչ վերահսկիչ դեր է կատարում դատական նախադեպը:

Հետևաբար, նպատակ հետապնդելով բնութագրել դատական նախադեպը՝ որպես իրավունքի աղբյուր, անհրաժեշտ է վերլուծել դատական նախադեպի էությունը, նշանակությունը, բացահայտել դրա կառուցվածքը, բովանդակությունն ու հիմնական հատկանիշները, տարբերակել վերջինիս «դատական պրակտիկա» հասկացությունից, հետազոտել դատական նախադեպի՝ որպես իրավունքի աղբյուրի տեղն ու դերը իրավակարգավորումների ոլորտում:

Ազգային իրավական համակարգում նախադեպի ինստիտուտի կիրառելիության աստիճանի հիմնախնդիրը վկայում է իրավասուբյեկտների մոտ նախադեպի էության վերաբերյալ հստակ պատկերացումների բացակայության, ինչպես նաև ոչ բավարար չափով տեսականորեն վերլուծության մասին և ընդգծում այդ հարցերի բացահայտման և գիտական խորը հետազոտություն կատարելու արդիականությունը և կարգավորման անհրաժեշտությունը:

**Թեմայի գիտական մշակվածության աստիճանը.** Տարբեր իրավական համակարգերը միմյանց հետ համեմատելիս կարելի է հանգել այն եզրակացության, որ դրանցից յուրաքանչյուրը կապված է իրավունքի աղբյուրների (ձևերի) որոշակի պատկերացումների հետ: Եվ իրավունքի աղբյուրների տարբեր ձևերի, մասնավորապես նախադեպային իրավունքի առաջնա-

հերթությունը որոշելու հիմնահարցը կապված է այդ իրավական համակարգերում իրավունքի վերաբերյալ պատկերացումների հիմնախնդրի հետ:

Ներկայիս ժամանակաշրջանում նախադեպային իրավունքի երևույթին նվիրված է ընդարձակ արտերկրյա գիտական գրականություն, իսկ ներքինը (ազգայինը) շատ սուղ է: Իրավունքի աղբյուր հանդիսացող նախադեպի ուսումնասիրությունը հաճախ սահմանափակվում է դատական պրակտիկայի դրույթների վերաբերյալ փաստերի նկարագրությամբ: Դատարանների կողմից նմանատիպ գործերով կատարված մեկնաբանությունները ներկայացնում են որոշակի գործնական արժեք այդ բնագավառում, բայց ոչ նախադեպային իրավունքի բնույթի բացահայտման համար:

Արդի պայմաններում նախադեպային իրավունքի դերի վերլուծության անհրաժեշտությունը կանխորոշվում է մի շարք գործոններով: Նախադեպի ինստիտուտի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ներկայացնել իրավունքի աղբյուրների ձևավորման նախապայմանները՝ կախված իրավունքի գերիշխող տեսակից, ինչպես նաև հարստացնել տվյալ իրավական համակարգում նախադեպային ինստիտուտի մասին գիտական պատկերացումները:

Այս առումով նշենք, որ ՀՀ փոփոխված Սահմանադրության (2015թ.), նոր ՀՀ դատական օրենսգրքը սահմանադրական օրենքի (2018թ.) և նոր քաղաքացիական դատավարության օրենսգրքի (2018թ.) ընդունումից, ինչպես նաև մնացած օրենսգրքերում կատարված որակական փոփոխություններից հետո Հայաստանի Հանրապետությունում դատական նախադեպի ինստիտուտը մեզանում չի ուսումնասիրվել պատշաճ կերպով: Առկա հետազոտությունները հիմնականում նվիրված են կոնկրետ նախադեպերի կիրառման այս կամ այն ասպեկտներին: Բացի այդ, նույնիսկ իրավակիրառ պրակտիկայում առաջացել են բազում բարդ և վիճահարույց հիմնահարցեր կապված դատական նախադեպի ճիշտ կիրառման, հիմնավորման և հարակից հարցերի հետ:

Ազգային իրավագիտության մեջ թերևս կատարվել են որոշակի հետազոտություններ՝ նվիրված դատական նախադեպին՝ որպես իրավունքի աղբյուր, այդուհանդերձ, դրանք չեն կրում համակարգված և ամբողջական ուսումնասիրություններ: Անցումային իրավական համակարգում քննարկվող հիմնախնդիրը շարունակում է ունենալ սոցիալ-իրավական նշանակություն՝ հարատև փոփոխվող օրենսդրական նորմերի և այդ օրենսդրության կիրառման համատեքստում:

Նախադեպի ինստիտուտին առավել համակողմանի անդրադարձել են արտասահմանյան (արևմտյան և ռուս) գիտնականները:

Անգլիական իրավագիտությունում խնդրո առարկայի վերաբերյալ իրենց նշանակալի ներդրումն ունեն Ռ. Քրոսսը, Ջ. Հարրիսը, Ա. Ուոթսոնը, Ա. Աշուորթը, Ա. Հոգյուն, Ս. Քոհենը, Գ. Ուիլիամսը, Ջ. Էվանսը և այլք:

Ռուսական իրավագիտության մեջ դատական նախադեպի հետ կապված հիմնահարցերն առավել լիարժեքորեն են ուսումնասիրված Մ. Մարչենկոյի, Ի. Բոգդանովսկայայի, Ս. Ալեքսենի և այլոց աշխատություններում:

Հավուր պատշաճի գնահատելով վերոնշյալ հեղինակների կատարած աշխատությունները, այդուհանդերձ, գտնում ենք, որ հայրենական իրավագիտությունը չի կարող այժմ ընկնել խնդրո առարկայի վերաբերյալ գիտահետազոտական արդյունքների բարձր մակարդակով:

Վերոնշյալ առումներով անհրաժեշտ է ընդգծել, որ սույն ատենախոսական աշխատանքն առաջիններից մեկն է, իսկ իր բովանդակային որոշ առումներով նաև առաջինը հայրենական իրավագիտության մեջ, որում համալիր և համակարգված հետազոտության է ենթարկվում նախադեպի ինստիտուտի և նախադեպային իրավունքի առաջացումը և զարգացումը՝ պատմական տեսանկյունից, դատական նախադեպի էությունը, բնույթը, բովանդակությունը և կառուցվածքային տարրերը, մեկնաբանման եղանակներն ու մի շարք այլ կարևորագույն հարցեր:

**Հետազոտության օբյեկտը և առարկան.** Ատենախոսության **օբյեկտը** դատական նախադեպն է՝ որպես իրավունքի աղբյուր:

Ուսումնասիրության **առարկան** կազմում է դատական նախադեպի առաջացումը, ժամանակի ընթացքում վերջինիս կատարելագործումը, դրա էությունը, բովանդակությունը և առանձնահատկությունները, կիրառման շրջանակները և գործառույթները, տարբեր կարևոր առումներն ու հիմնախնդիրները:

**Հետազոտության նպատակը և խնդիրները.** Սույն ատենախոսական աշխատանքի հիմնական նպատակը նախադեպի ինստիտուտի համակարգային վերլուծությունն է, դրա հետ կապված կարևոր հիմնահարցերի քննարկումը և լուծման եղանակների սահմանումը, ինչպես նաև իրավունքի աղբյուր հանդիսացող դատական նախադեպի դերի և տեղի պարզաբանումը պոզիտիվ իրավունքում:

Վերոնշյալ նպատակին հետամուտ՝ անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

-ուսումնասիրել դատական նախադեպի առաջացման նախադրյալները, բացահայտել դրա էությունը, հասկացությունը և հիմնական հատկանիշները,

-հետազոտել նախադեպի ինստիտուտի պատմական էվոլյուցիան, ուսումնասիրել այն իրավական համակարգերը, որոնք ներկա ժամանակաշրջանում գլխավորապես հիմնված են նախադեպային իրավունքի վրա,

-վերլուծել դատական նախադեպի դրական ազդեցությունը, կիրառման անհրաժեշտությունն ու հիմնավորումները, ինչի հետևաքնով արժևորել դատական նախադեպի դերն ու նշանակությունն իրավակարգավորման կառուցակարգում և ազգային իրավական համակարգում,

-բնութագրել և սահմանել դատական նախադեպի արդյունավետության բարձրացման և ազգային օրենսդրության կատարելագործման ուղիները՝ հաշվի առնելով նաև դատական պրակտիկան,

-մշակել դատական նախադեպի կիրառման համար գիտականորեն հիմնավորված առաջարկություններ, որոնք, հեղինակի կարծիքով, էապես կբարելավեն դատական պրակտիկայի արդյունավետությունը:

**Հետազոտության մեթոդաբանական հիմունքները և տեսական հիմքը.** Որպես դատական նախադեպի՝ իբրև տեսաիրավական կատեգորիայի հետազոտման մեթոդաբանական հիմք օգտագործվել են ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ մասնավոր գիտական մեթոդները: Ընդհանուր գիտական մեթոդ է հանդիսացել համընդհանուր դիալեկտիկական մեթոդը, այսինքն՝ դիալեկտիկայի օրենքներն ու կատեգորիաները: Հետազոտության արդյունքների վրա ազդեցություն են թողել նաև պատմական, տրամաբանական, համեմատական, համակարգային-կառուցվածքային, ձևական-իրավաբանական, համակարգային վերլուծության մեթոդները, ինչպես նաև իրավունքի սոցիոլոգիայի, իրավունքի փիլիսոփայության, քաղաքակրթական մոտեցումները:

Հետազոտության համար որպես **տեսական բազա** ծառայել են դատական նախադեպի վերաբերյալ տարբեր գիտական աշխատությունները, ինչպես նաև պետության և իրավունքի տեսության գիտության արդյունքները, որոնք աղերսվել են քննարկվող թեմայի հետ: Մասնավորապես, ատենախոսության համար տեսական հենք են հանդիսացել հայրենական և արտասահմանյան գիտնականների՝ Վ. Ս. Ներսեսյանցի, Ա. Լ. Ասատրյանի, Գ. Գ. Հարությունյանի, Գ. Հ. Սաֆարյանի, Ս. Ս. Ալեքսեևի, Ի. Յու. Բոգդանովսկայայի, Լ. Ն. Սմիրնովի, Մ. Ս. Ստրոգովիչի, Ռ. Զ. Լիվշիցի, Վ. Ս. Շեկոլովի, Ն. Ե. Կրիլովայի, Գ. Ա. Ադիգեզալովայի, Ռ. Ա. Գուբաևովի, Յու. Ա. Դմիտրիևի, Վ. Մ. Լեբեդևի, Պ. Ա. Գուկի, Ա. Ն. Գոլովատիկովայի, Ռ. Դավիդի, Վ. Վ. Դժուրայի, Մ. Վ. Զախարովայի, Մ. Ն. Մարչենկոյի, Ն. Ա. Պոդոլսկայայի, Գ. Ֆ. Շերշենևիչի, Մ. Խրիպունովի, Տ. Վ. Շեպելի, Է. Ա. Սուխանովի, Մ. Ա. Ստեպանովի, Դ. Ա. Պաշենցևի, Ի. Բ. Նովիցկիի, Ա. Ն. Վերեշյագինի, Ա. Ա. Կուրբատովի, Վ. Ա. Տոմսինովի, Վ. Վ. Ռակոյի, Ա. Կ.

Ռոմանովի, Վ. Վ. Սոռոկինի, Վ. Ն. Խրոպանյուկի, Ա. Ութսունի, Ա. Աշուրֆի, Ա. Ռ. Հոգյուի, Զ. Վ. Հարիսի, Ա. Ռ. Քրոսսի, Հ. Լ. Ա. Հարթի, Դ. Զ. Բեդերմանի, Ֆ. Ս. Քոհենի, Գ. Սլեփֆերի, Գ. Ուլլիամսի, Կ. Ժոֆրե-Սպինոզի, Զ. Էվանսի, Լ. Բ. Դիքսոնի, Դ. Լյոյդի, Հ. Վ. Ջոնսի, Ս. Ուրբինայի, Ք. Ա. Ֆրիերսոնի, Հ. Մաթթյուի, Ռ. Դուրքինի, Զ. Պ. Քեմբրի, Օ. Էյդելմանի, Դ. Մայերսի, Վ. Թուիննինգի և այլոց աշխատությունները:

**Հետազոտության փորձարարական (էմպիրիկ) և նորմատիվ հիմքն են՝** ՀՀ Սահմանադրությունը (2015թ. փոփոխություններով), ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքը (2018թ.), ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (2018թ.), ՀՀ օրենքները, ՀՀ նախագահի հրամանագրերը, ՀՀ կառավարության որոշումները, միջազգային և իրավական փաստաթղթերը, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայի նյութերը:

**Ատենախոսական հետազոտության գիտական նորույթը.** Աշխատանքի գիտական նորույթը դատական նախադեպի հետ կապված հիմնահարցերի համալիր և համակարգված ուսումնասիրության մեջ է, որում բացահայտվել է դատական նախադեպի տեղն ու դերը իրավունքի աղբյուրների համակարգում, դատական նախադեպի էությունը և բնույթը՝ որպես իրավունքի աղբյուր, արժևորվել է դատական նախադեպը նոր սոցիալ-տնտեսական պայմաններում, ինչպես նաև բացահայտվել են դատական նախադեպի գործառույթների և սկզբունքների օրենսդրական կարգավորման և դատական պրակտիկայում դրանց կիրառման առանձնահատկությունները: Ատենախոսական հետազոտության գիտական նորույթը կայանում է ինչպես դատարկվող հարցերի համալիրի ընտրության ու սահմանման, այնպես էլ վերլուծության արդյունքների հիման վրա ձևավորված եզրակացությունների և առաջարկությունների մեջ:

Բացի վերոնշյալից, սույն ատենախոսական աշխատանքում համակողմանի քննական վերլուծության են ենթարկվել նախադեպի ինստիտուտի վերաբերյալ առկա հայեցակարգային և գործնական բնույթի մոտեցումները, տրվել են դրանց գնահատականները, վեր են հանվել դրանց դրական և թերկողմերը:

Հետազոտության գիտական նորույթի տարրեր են պարունակվում նաև պաշտպանության ներկայացվող դրույթներում:

**Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներն են՝**

1. Դատական նախադեպը, հանդիսանալով դատական իրավաստեղծ գործունեության արդյունք, հարկ է դիտարկել որպես այնպիսի իրավակիրառ ակտ, որը ձեռք է բերում պարտադիր իրավաբանական ուժ, ոչ միայն կոնկրետ գործով, այլ նաև հետագայում նմանատիպ գործեր քննելիս:

2. Դատական նախադեպը նյութական և դատավարական իրավունքի նորմերի կիրառմամբ պայմանավորված, նորմատիվ բնույթ ունեցող, պետական հարկադրությամբ ապահովված և երաշխավորված, ֆորմալ սահմանված (կիրառման) ակտ է, որի հեղինակ կարող են լինել արդարադատություն իրականացնող մարմինները՝ դատարանները (բարձրագույն դատական ատյանները):

3. Դատական նախադեպը կոնկրետ անձանց իրավահարաբերությունները կարգավորող ակտ է, որի հատկանիշներն են՝ որոշակիությունը, կանխատեսանելիությունը, պարտադրականությունը և հետագա գործածությունը համանման իրավական կազուսներում:

4. Դատական նախադեպը՝ որպես իրավունքի աղբյուր, մարդկային բանականության, ճկուն տրամաբանության, օրենքի իմացության, իրավաբանական մտածողության և դատական պրակտիկայի վերլուծության արդյունք է: Ավելին, դատական նախադեպն իրավաբանորեն հիմնավորված բարդ և երկարատև ստեղծագործ աշխատանքի (ստեղծագործական ընթացակարգի) արդյունք է:

5. Դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո նախադեպային դրույթները ձեռք են բերում պոզիտիվ իրավունքին համարժեք հատկանիշներ, ինչպես օրինակ՝ նորմատիվություն, հարկադրականություն, ուղղակի գործողություն, և հենց օրինական ուժի մեջ մտնելու պահից սկսած է դատական ակտը դառնում կիրառման ենթակա նմանատիպ այլ գործերի լուծման համար:

6. Դատական նախադեպը վեճերի լուծման հիմնական եղանակներից մեկն է՝ որպես փոփոխվող հասարակական հարաբերությունների համարժեք կարգավորման միջոց և տարբեր իրավական ընտանիքների ինտեգրման եղանակ: Դատական նախադեպը՝ որպես իրավունքի աղբյուր, ունի առանձնահատկություն, որը կայանում է հետևյալում. կոնկրետ անձանց իրավահարաբերությունները կարգավորելիս դատական նախադեպը կատարում է մեկնաբանող և իրավասահմանող (իրավահաստատող) գործառույթներ, այն մեկնաբանում է գործող օրենսդրության իրավանորմերը և բացահայտում դրանց հարաբերակցությունը, պարզաբանում այդ իրավանորմերի կիրառման ձևերը: Դատական նախադեպերի միջոցով կատարվում է օրենքի դատական մեկնաբանություն, որն ունի պաշտոնական բնույթ: Բացի դրանից, դատական նախադեպը իրավասահմանող (իրավահաստատող) գործառույթ է իրականացնում, այսինքն՝ ընդունում է նոր իրավադրույթ (իրավադրույթներ), որով պետք է ղեկավարվեն նմանատիպ բազում գործերի լուծման ժամանակ (հակառակ դեպքում անհրաժեշտ են պատշաճ հիմնավորումներ):

7. Դատական նախադեպն այժմ է ընկնում իր դինամիկ բնույթով, քանի որ հենց դրա միջոցով են ընդգծվում և լրացվում օրենքի բացերը, նորմատիվ կարգավորում չունեցող իրավական բնույթի վեճերը, որի հետևանքով կատարելագործվում է օրենսդրությունը, բարելավում իրավակիրառ պրակտիկան և նոր իրավադրույթների հաստատման եղանակով վերացվում են իրավական բացերն ու հակասությունները:

8. Դատական նախադեպն այժմ է ընկնում նաև իր ճկունությամբ, քանի որ այն ձևավորվում է հենց իրավահարաբերության կողմերի կամահայտնության հետևանքով, ինչն էլ արտացոլում է տվյալ ժամանակահատվածի դատական պրակտիկան, այսինքն՝ այդ ժամանակահատվածի իրավական վեճերի լուծման բնույթը, առանձնահատկությունները, իրավամեկնողական արվեստի և իրավաբանական տեխնիկայի մակարդակը: Դատական նախադեպը՝ որպես իրավակիրառ ակտ, գրավոր փաստաթուղթ է և այդ իսկ պատճառով նրան բնորոշում են իրավաբանական փաստաթղթերի և ակտերի բոլոր հատկանիշները:

**Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը.** Հաստատանի Հանրապետությունում իրականացված սահմանադրական և դատաիրավական բարեփոխումները որոշակիորեն առնչվում են նաև նախադեպային իրավունքին, սակայն իրավունքի տեսության կողմից դրանք չեն ենթարկվել խորքային տեսական վերլուծության: Սույն ատենախոսության մեջ ձևակերպված տեսական դրույթները և եզրահանգումները թույլ են տալիս բացահայտել և լուծել մի շարք հիմնախնդիրներ, որոնք, մեր կարծիքով, որոշակիորեն կնպաստեն պետության և իրավունքի ընդհանուր տեսության, իրավունքի պատմության և իրավագիտության առանձին բաժինների զարգացմանը:

Այս տեսանկյունից ատենախոսության տեսական նշանակությունն այն է, որ գիտական հետազոտության առարկա է դարձել դատական նախադեպը, դրա կիրառման իրավական հիմքերը, միևնույն ժամանակ բացահայտվել են օրենսդրական համակարգում և դատական պրակտիկայում խնդրառարկայի վերաբերյալ եղած հակասություններն ու բացերը, դրանք շտկելու համար մշակվել են մի շարք առաջարկություններ, որոնք ունեն ոչ միայն տեսական, այլև գործնական-կիրառական նշանակություն:

Ատենախոսության գործնական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ դրա արդյունքները կարող են կիրառվել գիտահետազոտական գործունեության ընթացքում, իրավաստեղծ և իրավակիրառական բնագավառներում, դատական պրակտիկայում, ինչպես նաև պետության և իրավունքի տեսության և պատմության և իրավագիտության որոշ ճյուղերի դասընթացների, դասախոսությունների, սեմինարների և իրավակիրառ մար-

մինների համապատասխան վերապատրաստման դասընթացների ժամանակ:

Բացի դրանից, աշխատանքը կարող է օգտակար լինել իրավաբանական և դատական գործունեության վերաբերյալ հետագա ուսումնասիրություններ կատարողների և պրակտիկ աշխատողների համար:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը.** Ատենախոսական աշխատանքը նախապատրաստվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ իրականացվել են դրա քննարկումն ու գրախոսությունը:

Թեկնածուական ատենախոսական աշխատանքի առավել կարևոր դրույթներն իրենց արտացոլում են գտել հեղինակի մի շարք գիտական հրապարակումներում:

**Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը.** Սույն ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք ներառում են վեց ենթագլուխ, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

#### **Ատենախոսության հիմնական բովանդակությունը**

Աշխատանքի ներածական մասում հեղինակը հիմնավորում է հետազոտության թեմայի արդիականությունը, գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակը և խնդիրները, ներկայացնում է աշխատանքի գիտական նորոյթը, պաշտպանության հիմնական դրույթները, տեսական և գործնական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլուխը՝ «**Դատական նախադեպի պատմատեսական ասպեկտները**» վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից:

Աշխատանքի առաջին գլխի առաջին ենթագլխում՝ «**Նախադեպի առաջացումը և զարգացումը հին հռոմեական իրավական համակարգում**» վերնագրով, հեղինակը հանգամանորեն վերլուծության է ենթարկել հին հռոմեական իրավունքի համակարգը և աղբյուրները, բացահայտել է պրետորայի կառուցվածքը, դատական գործունեության դատավարական կարգը, պրետորական իրավունքի՝ որպես հնագույն նախադեպային իրավունքի բովանդակությունը, բնույթն ու էությունը, բնորոշ հատկանիշները, պրետորների կողմից արձակվող ակտերի՝ էդիկտների նշանակությունը և կառուցվածքը, հայցերի տեսակները, պրետորի դատավարական արտոնությունները և կարևորագույն այլ հարցեր, պարզաբանել է, որ պրետորական իրավունքը որպես հռոմեական իրավունքի ենթահամակարգ, ձևավորվել է պրետորների դատական գործունեության արդյունքում:

Աշխատանքի առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ «**Դատական նախադեպի հասկացությունը, հատկանիշները և տեսակները**» վերնագրով, հեղինակն ուսումնասիրել է իրավունքի աղբյուրներից դատական նախադեպի հասկացությունը, էությունը, նշանակությունը և բնութագրական առանձնահատկությունները, բացահայտել է դատական նախադեպի դերը և տեղը ինչպես իրավունքի աղբյուրների համակարգում, այնպես էլ տարբեր իրավական համակարգերում, կատարել է համակողմանի համեմատական վերլուծություն, վեր է հանել դատական նախադեպին բնորոշ հատկանիշները, ինչպես նաև դասակարգման է ենթարկել դատական նախադեպերը՝ մի շարք հիմքերով:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ «**Դատական նախադեպի էությունը ընդհանուր իրավունքի համակարգում. էվոլյուցիայի մանրամասները**» վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից:

Աշխատանքի երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ «**Դատական նախադեպի ժամանակակից դոկտրինի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները Անգլիայում**» վերնագրով, հեղինակը խորը վերլուծության է ենթարկել նախադեպային իրավունքի զարգացման ընթացքը ընդհանուր իրավունքի համակարգում, մասնավորապես՝ Անգլիայում, պարզաբանել է Անգլիայի դատական իշխանության կառուցվածքը, դատական որոշումների և պրակտիկայի առանձնահատկությունները, դատական իրավաստեղծման օրինականությունը և իրավազորությունը: Անդրադառնալով Անգլիայում նախադեպի դոկտրինի խիստ պարտադիր բնույթին՝ հեղինակը վերլուծել է որոշ հեղինակավոր իրավաբան գիտնականների կողմից արդեն իսկ կատարված հետազոտությունները՝ կապված դատական նախադեպի ինստիտուտի հետ, ինչի արդյունքում պարզաբանել է պարտադիրության և այդպիսի այլ սկզբունքների էությունը և կիրառման առանձնահատկությունները, ներկայացրել է դատական նախադեպի՝ որպես դատական որոշման երկու հիմնական կառուցվածքային մասերը՝ ratio decidendi-ն և obiter dictum-ը, տվել է իր հեղինակային մոտեցումները, համեմատություն է կատարել նախադեպային և ստատուտային իրավունքների միջև, ընդգծել մի շարք հիմնախնդիրներ:

Աշխատանքի երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «**Դատական նախադեպի բովանդակային առանձնահատկությունները**» վերնագրով, հեղինակը քննական վերլուծության է ենթարկել Անգլիայում գործող դատարանների հիերարխիան, առանձին անդրադարձ է կատարել Լորդերի պալատին, որը ներկայումս գործող Գերագույն դատարանն է, և վերջինիս կարևորագույն որոշումներին, պարզաբանել է նախադեպային որոշումների բովանդակությունը՝ դրանցում պարունակվող սկզբունքները և կանոնները,

այդ կապակցությամբ առանձին անդրադարձ է կատարել Անգլիայի նախադեպի դոկտրինի նախնական հայտարարությանը, դատական որոշման դեկլարատիվ (հայտարարագրող) տեսությանը, տարբեր դատական ատյաններում կայացրած որոշումների ratio decidendi-ի և obiter dictum-ի էությունը, իրավաբանական ուժին, բնութագրական հատկանիշներին և տեսակներին, վերլուծել է դատական որոշման մեջ ratio decidendi-ն բացահայտելու հանրահայտ մեթոդները, stare decisis սկզբունքը և այդ սկզբունքի բացառությունները:

Աշխատանքի երրորդ գլուխը՝ «**Նախադեպային իրավունքը Հայաստանի Հանրապետությունում**» վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից:

Աշխատանքի երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ «**Դատական նախադեպի ինստիտուտը Հայաստանի Հանրապետության արդարադատության համակարգում. սահմանադրական և օրենսդրական փոփոխությունների համատեքստում**» վերնագրով, հեղինակը հետազոտության առարկա է դարձրել Հայաստանի ազգային իրավական համակարգում բարձրագույն դատական ատյանների դերն ու նշանակությունը նախադեպային իրավունքի ձևավորման գործընթացում, ինչպես նաև ներկայացրել և մեկնաբանել է Հայաստանի Հանրապետությունում շարունակական դատաիրավական բարեփոխման գործընթացները, վերլուծել է Հայաստանի Հանրապետությունում նախադեպային իրավունքի կիրառման արդիականության հարցը և զարգացման ուղիները, արդարադատության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրը՝ նախադեպի ինստիտուտի տեսանկյունից, բարձրագույն դատական ատյանների որոշումների իրավաբանական ուժը, դատական պրակտիկայի և դատական նախադեպի, նախադատելիության և նախադեպի տարբերությունները, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումների պարտադիրության հարցը Հայաստանի Հանրապետության ներքին իրավական համակարգի համար:

Աշխատանքի երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «**Դատական նախադեպի կիրառման առանձնահատկությունները**» վերնագրով, հետազոտության առարկա է դարձել Հայաստանի Հանրապետությունում նախադեպային իրավունքի պարբերաբար զարգացման գործընթացը, հատուկ առանձնացվել է դատական նախադեպը՝ որպես իրավունքի աղբյուր, Հայաստանի Հանրապետության դատական իշխանության մարմինների կողմից դատական նախադեպի կիրառման նախադրյալներն ու առանձնահատկությունները, մատնանշվել են այդ առնչությամբ որոշ հիմնախնդիրներ: Նախադեպային որոշումների մի քանի օրինակների միջոցով հեղինակը ներկայաց-

րել է վերջիններիս մեկնաբանող դերը, օրենքի անորոշությունները հստակեցնող և բացերը լրացնող, օրենքի միատեսակ կիրառությունն ապահովող և հարակից այլ հարցեր պարզաբանող գործառույթները:

**Հետազոտության արդյունքների հիման վրա հեղինակը հանգել է հետևյալ եզրակացությունների.**

1. Դատական նախադեպի ինստիտուտը, բնականաբար, որոշակիորեն սահմանափակում է դատարանների ինքնուրույնությունը և մյուս կողմից նկատելի ներազդեցություն է ունենում իշխանությունների տարանջատման սկզբունքների դրսևորման վրա: Սակայն, թե մեկ և թե մյուս գործոններն ուղեկցվում են որոշակի հակակշիռներով: Նախ, դատարանը կարող է, քննվող գործի որոշ առանձնահատկություններից ելնելով, չկիրառել դատական նախադեպը, կարող է դատական նախադեպի հոծ զանգվածից ընտրել որևէ մեկը, որն ըստ իր հայեցողության առավել համահունչ է իր վարույթում քննվող գործին և այլն:

Մյուս կողմից, դատական նախադեպը ոչ թե գերակայում, այլ ստորադասվում է օրինաստեղծ գործունեությանը, ինչը որոշակիորեն կաշկանդում է դատական նախադեպի շրջանակների ընդլայնումը: Ըստ էության դատական նախադեպն առավելապես հանդես է գալիս օրենքների մեկնաբանության տեսքով և դրսևորվում է որպես ընհանուր իրավունքի անկյունաքար:

2. Չնայած մի շարք երկրներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, դատական նախադեպը ձևական-իրավաբանական առումով չի ճանաչվում որպես մայրցամաքային գործող դրական իրավունքի աղբյուր, այնուամենայնիվ, դատական նախադեպերի ժողովածուների քանակը տարեցտարի ավելանում է Հայաստանում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Իտալիայում և շատ այլ երկրներում: Դա, անկասկած, հանդիսանում է ցուցանիշներից մեկը նախադեպի՝ որպես իրավունքի աղբյուրի ընդունման և պրակտիկ նշանակության մասին:

Հօգուտ վերջինիս խոսում են նաև այլ գործոններ, ինչպես օրինակ՝ մի շարք պետությունների (Գերմանիա, Իտալիա և այլն) սահմանադրական դատարանների որոշումների պարտադիրությունը բոլոր ստորադաս դատարանների և պետական այլ մարմինների համար, չնայած նրան, որ դատական որոշումներն այդ պետություններում որպես իրավունքի աղբյուր ձևակերպում են ճանաչվում:

3. Նախադեպի՝ որպես իրավունքի աղբյուր, պրակտիկ դերի թեզի օգտին է խոսում նաև այն, որ ռոմանագերմանական իրավունքի երկրների իրավաբանների մեջ ավելի շատ է գերակշռում այն կարծիքը, որի համաձայն՝ իրավունքը բոլորովին էլ չի ստեղծվում միայն պետության

կողմից ապրիորի ճանապարհով և չի բովանդակվում բացառապես օրենսդրական նորմերում: Իրավունքի որոնումը խնդիր է, որը պետք է լուծվի բոլոր իրավաբանների համատեղ ջանքերով, միասնաբար, յուրաքանչյուրն իր ոլորտում, օգտագործելով բոլոր մեթոդները, ներառյալ դատարաններում պրակտիկ իրավաբանների գործունեության մեթոդները:

4. Ժամանակակից արևմտաեվրոպական երկրների իրավաստեղծ և իրավակիրառ փորձը վկայում է, որ հենց դատական պրակտիկայի միջոցով են սկսվում հասարակական կյանքում ձևավորվել և գերիշխել ազատական գաղափարախոսության հիմնական, ելակետային սկզբունքներն ու դրույթները՝ մարդու իրավունքների առաջնայնությունը, դրական (պոզիտիվ) իրավունքում՝ ազատության, ձևական-իրավաբանական հավասարության և արդարության արժեքային հատկությունների առարկայական արտացոլումը և այլն:

5. Իրավաբանական գրականության մեջ և դատական պրակտիկայում ընդունված է այն տեսակետը, որ դատական նախադեպը միայն բարձրագույն դատական մարմինների իրավաստեղծ գործունեության ակտ է: Այստեղից էլ կայացվում են մի շարք հակասական և երբեմն նույնիսկ իրարամերժ դատական որոշումներ, դատական վճիռներ, դատավճիռներ: Միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար առաջնահերթ նշանակություն ունի յուրաքանչյուր դատական ատյանի դատական ակտերի միանմանությունը՝ նույնանման փաստական հանգամանքներ պարունակող գործերով, ինչն էլ իր հերթին նշանակում է, որ տվյալ ատյանի դատավորը պետք է կայացնի հնարավորինս ճշգրիտ և հիմնավոր դատական ակտ, որի պատճառաբանությունների ուսումնասիրությունից հետո կմերժվեն վեճի լուծման համար որևէ այլ ելքի առաջարկությունները:

6. Կոնկրետ գործով դատավարության կողմերն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իրենց իրավունքները, ազատությունները և օրինական շահերը պաշտպանելու համար օժտված են դատարան դիմելու իրավունքով, նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման դեպքում՝ ավելի բարձր դատական ատյան բողոքարկելու իրավունքով, այնուամենայնիվ, վերը նշված իրավունքներն իրականացնելուց առաջ կոնկրետ վեճի լուծման կանխատեսելի լինելը, ինչը հնարավոր է առաջին հերթին վերադաս դատարանների դատական ակտերի, իսկ այնուհետև՝ ստորադաս դատարանների դատական ակտերի միջոցով, կարող է նվազեցնել երկարատև դատաքննության, դատավարության ընթացքում փաստաբանի ծառայության վճարման կամ դատավարությանն անձի ակտիվ մասնակցության գործողությունների անհրաժեշտությունը:

7. Առաջարկում ենք ազգային բարձրագույն դատական ատյաններին (Սահմանադրական դատարան, Վճռաբեկ դատարան) օժտել օրենսդրական ակտերի (Սահմանադրություն, սահմանադրական օրենքներ, օրենք) պաշտոնական մեկնաբանության լիազորություններով, դրա միջոցով ընթացիկ կերպով կրթացվեն օրենքի բացերը, կկատարվի դրանց անհրաժեշտ մեկնաբանությունը, գործող օրենսդրությունը կհամապատասխանեցվի հասարակության պահանջներին, ինչի հետևանքով կնվազի պառլամենտական կարգով օրենքում փոփոխություններ կատարելու (օրենքը նորացնելու) կամ նոր օրենք ընդունելու անհրաժեշտության աստիճանը:

8. Դատական նախադեպը ձևականորեն և իրավաբանորեն ամրագրելու նպատակով՝ առաջարկում ենք ՀՀ Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 171-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին մասի վերջում ավելացնել նախադեպ արտահայտությունը՝ «Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով՝ ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը՝ կայացնելով նախադեպային որոշումներ»:

9. Առաջարկում ենք դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում սահմանել այսպիսի իրավանորմ (կամ իրավադրույթ)՝ ՀՀ արդարադատության համակարգում յուրաքանչյուր դատավոր պարտավոր է հետևել վերադաս դատավորի որոշմանը, իսկ վերադաս դատավորները՝ իրենց նախկին որոշումներին, ինչպես նաև յուրաքանչյուր դատավոր պարտավոր է հաշվի առնել ինչպես իր նախկին՝ օրինական ուժի մեջ մտած որոշումները, այնպես էլ իր հետ միևնույն դատական ատյանի այլ դատավորների օրինական ուժ ստացած դատական որոշումները: Դատավորն իր հայեցողությամբ է որոշում քննվող և նախադեպային գործերի միջև փաստական հանգամանքների նույնանմանության հարցը, նախադեպային որոշման կիրառման դեպքում վեր է լուծում և հետևություն անում նախադեպային որոշման մեջ կիրառված իրավական նորմերի, փաստերի, կատարված վերլուծությունների, ներկայացված պատճառաբանությունների, եզրահանգումների և գործի ելքի հարցերի շուրջ:

10. Ինչպես նաև առաջարկում ենք ստեղծել վեճերի լուծման արագացված՝ նախադեպային կարգ, որի հիմքը կկազմի դատավարության կողմերի՝ դատական նախադեպեր վկայակոչելու փաստը: Այս պարագայում հարկ է օրենսդրորեն սահմանել իրավական դրույթ, որի համաձայն՝ դատարանն իրավունք ունի կիրառելու արագացված դատաքննություն, եթե գործին մասնակցող անձինք վկայակոչել են նույնանման փաստական հանգամանքներով դատական նախադեպ (նախադեպեր) և դիմել դատարանին՝ այդ հիմքով արագացված դատաքննություն կիրառելու վերաբերյալ:



11. Հետազոտության արդյունքների հիման վրա հեղինակը դատական նախադեպերը առաջարկում է դասակարգել հետևյալ կերպ. պարտադիր, մեկնաբանող և պարզաբանող, որոնց հիմքում որպես դասակարգման չափանիշ ընկած է նախադեպերի պարտադրականությունը՝ ըստ իրավաբանական ուժի և բովանդակային վերլուծությունների և պատճառաբանությունների:

12. Հենց նախադեպային իրավունքն է առավելագույն կերպով նպաստում տարբեր երկրների իրավունքի զարգացմանը և երաշխավորում այդ երկրների օրենքների միատեսակ կիրառումը: Հատկանշական է նաև, որ նախադեպի ինստիտուտը զգալիորեն թեթևացնում է ստորադաս դատարանների գործունեությունը, որոնց իրավունք է վերապահված դատական գործերի քննությունն ավարտելով՝ վերջնական (գործն ըստ էության լուծող) դատական ակտ՝ վճիռ, դատավճիռ կամ որոշում կայացնելիս, հղում կատարել նմանատիպ գործերով հենց վճռաբեկ դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումներին՝ դատական նախադեպերին: Այս հանգամանքը վկայում է նախադեպի ինստիտուտի դրական ազդեցության և փաստացի իրականությունում՝ դրա կարևորության մասին:

13. Ուսումնասիրելով իրավունքի աղբյուր հանդիսացող դատական նախադեպի էությունը, պարզ է դառնում, որ այն կոչված է ապահովելու իրավունքի սուբյեկտների պաշտպանվածությունը, քանի որ նախադեպային իրավունքի միջոցով գործի լուծումը դառնում է ավելի հիմնավոր և կանխատեսելի: Եվ այն փաստը, որ նախադեպային իրավունքը գտնվում է շարունակական զարգացման փուլում, ենթադրում է, որ նախադեպի ինստիտուտի ակտիվ կիրառման հարցն այսօր իսկապես արդիական է:

14. Յուրաքանչյուր պետություն, զարգացնելով ներպետական իր իրավունքում նախադեպերի ծավալը, պետք է ուշադրություն դարձնի նաև միջազգային նախադեպային պրակտիկային, որն ունի զգալի ժառանգություն այս բնագավառում՝ խնդիրների ուրույն և առավել արդյունավետ լուծումներով հանդերձ:

### **Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**

#### **ա) Մենագրություն**

1. Հակոբյան Ա., Դատական նախադեպի էությունը և առանձնահատկությունները. պատմատեսական և իրավակիրառական հիմնախնդիրներ, Եվրոպրինտ, Երևան, 2017, 120 էջ:

#### **բ) Գիտական հոդվածներ**

1. Հակոբյան Ա., Պրետորական իրավունքի նախադեպային բնույթի շուրջ // «Դատական իշխանություն» ամսագիր, 10-11/221-222, Երևան, 2017, էջ 3-9:

2. Հակոբյան Ա., Պրետորական իրավունքի ծնավորման և զարգացման հիմնախնդիրները // «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, Երևան, 2018, № 103, էջ 48-52:

3. Հակոբյան Ա., Պրետորական էդիկտի նշանակությունը, առանձնահատկությունները իրավակարգավորումների ոլորտում // «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, Երևան, 2018, № 104, էջ 56-60:

4. Հակոբյան Ա., Նախադեպային իրավունքը անգլոսաքսոնական իրավական համակարգում պատմաիրավական տեսանկյունից // «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, Երևան, 2018, № 105, էջ 51-55:

5. Հակոբյան Ա., Նախադեպը ընդհանուր իրավունքի աղբյուրների համակարգում // «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, Երևան, 2018, № 106, էջ 42-48:

6. Հակոբյան Ա., Դատական նախադեպ իրավունքի տեսության տեսանկյունից // «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, Երևան, 2018, № 107, էջ 57-62:

7. Հակոբյան Ա., Պրետորական էդիկտները որպես պրետորների իրավաստեղծ գործունեության արդյունք // «Արդարադատություն» ամսագիր, Երևան, 2018, № 3(44), էջ 29-33:

8. Հակոբյան Ա., Դատական նախադեպի մեկնաբանության մեթոդաբանական հիմնախնդիրները (Անգլիայի օրինակով) // «Արդարադատություն» ամսագիր, Երևան, 2018, № 4(45), էջ 18-22:

9. Хакобян. А., Основни историко-теоретични проблеми на източниците на правото // правното списание Норма, София, 2017, октомври, брой № 9, с. 5-12.

10. Хакобян. А., Понятие за източник на правото и съотношение между източник и форма на правото // правното списание Норма, София, 2017, ноември, брой № 10, с. 5-12.

**СУДЕБНЫЙ ПРЕЦЕДЕНТ КАК ИСТОЧНИК ПРАВА: ИСТОРИКО-ТЕОРЕТИЧЕСКИЙ И ПРАВОВОЙ АНАЛИЗ**

**РЕЗЮМЕ**

Диссертация посвящена исследованию судебного прецедента - как источника права различных зарубежных правовых систем, а также отечественной правовой системы. Судебная власть является независимой, автономной и обособленной, она заключается в исключительном праве судов рассматривать правовые споры в специальном процессуальном порядке, при осуществлении которой суд регулируется законом и от имени государства постановляет судебные акты, а также решает конкретные социально-правовые споры. Именно в результате функционирования судебной власти формируется институт судебного прецедента, что означает обеспечение определенности и предсказуемости судебных решений. Наука теории и истории государства и права дает судебному прецеденту центральную роль, так как законодательство, являющееся основным источником права континентальной правовой системы, не способно полностью контролировать и регулировать динамично развивающиеся социальные процессы и общественные отношения. Проблема степени применимости прецедентного института в национальной правовой системе свидетельствует об отсутствии четкого понимания предмета прецедента и о недостаточном теоретическом анализе, а также подчеркивает настоятельную необходимость раскрытия этих вопросов и проведения глубоких научных исследований. К решению всех вышеперечисленных, а также других важных вопросов и посвящена данная научная диссертационная работа.

Научная новизна исследовательской работы заключается в комплексном и систематизированном изучении основополагающих вопросов, относящихся к судебному прецеденту, в результате чего выявлены место и роль судебного прецедента в системе источников права, его сущность и характер как источника права, произведена объективная оценка судебного прецедента в новых социально-экономических условиях, а также выявлены особенности законодательного урегулирования функций и принципов судебного прецедента и применение их в судебной практике. Научная новизна диссертации заключается также как в выборе и определении рассматриваемых вопросов в совокупности, так и в научных заключениях и предложениях, сформированных на основе результатов

анализа. Кроме перечисленного, в данной диссертационной работе подвергнуты всестороннему тщательному анализу все существующие концептуальные и практические подходы относительно института прецедента, дана их соответствующая оценка, освещены их положительные стороны и недостатки.

Теоретическая и практическая значимость диссертации состоит в том, что проведенные в Республике Армения законодательные реформы определенно соотносятся также с прецедентным правом, однако со стороны теории права не были подвергнуты глубокому теоретическому изучению. Сформулированные в данной диссертации теоретические положения и выводы позволяют выявить и решить ряд основополагающих проблем, что безусловно будет способствовать развитию общей теории государства и права, истории права и развитию отдельных разделов права. С этой точки зрения теоретическая значимость диссертации заключается в том, что предметом научного исследования является судебный прецедент, правовые основания для его применения, противоречия и пробелы касательно прецедента в законодательной системе и в судебной практике, разработан ряд научных предложений для их корректировки, которые имеют не только теоретическую, но и практическую и применительную значимость. Практическая значимость диссертации определяется тем, что ее результаты могут быть применены в ходе научно-исследовательской деятельности, в правотворческой и правоприменительной сферах, в судебной практике, на учебных курсах, лекциях и семинарах по теории и истории государства и права, и в некоторых отраслях юриспруденции, а также во время курсов по переподготовке и повышению квалификации соответствующих правоприменяющих органов.

Данная диссертация также может быть полезна в последующих научных исследованиях юридической деятельности как для практикующих юристов и ученых, так и для заинтересованных лиц.

**ANNA ASHOT HAKOBYAN**

**JUDICIAL PRECEDENT AS SOURCE OF LAW:  
HISTORICAL-THEORETICAL AND LEGAL ANALYSIS**

**SUMMARY**

Dissertation is devoted to the study of the judicial precedent - as a source of law of various foreign legal systems, as well as the domestic legal system. The judicial power is independent, autonomous and separate, it consists in the exclusive right of the courts to examine legal disputes in a special procedural order, in the implementation of which the court is regulated by law and on behalf of the state enacts judicial acts, as well as resolves specific social and legal disputes. It is as a result of the functioning of the judiciary that the institution of judicial precedent is being formed, which means ensuring the certainty and predictability of judicial decisions. The science of theory and history of law and state gives the judicial precedent a central role, since legislation, which is the main source of the law of the continental legal system, is not able to fully control and regulate the dynamically developing social processes and public relations. The problem of the degree of applicability of the precedent institution in the national legal system testifies to the lack of a clear understanding of the subject matter of the precedent and to insufficient theoretical analysis, and also underscores the urgent need to disclose these issues and conduct profound scientific research. To address all of the above issues, as well as other important issues, this scientific dissertational work is devoted.

The scientific novelty of the research work lies in the comprehensive and systematic study of the fundamental issues related to the judicial precedent, which resulted in the identification of the place and role of the judicial precedent in the system of sources of law, its nature and character as a source of law, an objective assessment of the judicial precedent in the new socio-economic conditions is made, and also the features of legislative adjustment of functions and principles of judicial precedent and their application in judicial practice are revealed. The scientific novelty of the dissertation consists also both in the choice and determination of the issues under consideration in the aggregate, and in scientific conclusions and proposals formed on the basis of the results of the analysis. In addition to the above, all the existing conceptual and practical approaches to the precedent institute have been comprehensively and thoroughly analyzed in this dissertational work, their respective assessment has been given, their positive aspects and shortcomings have been highlighted.

The theoretical and practical significance of the dissertation is that the legislative reforms carried out in the Republic of Armenia are definitely correlated also with case law, however they have not been subjected to a deep theoretical study from the side of the theory of law. The theoretical provisions and conclusions formulated in this dissertation enable to identify and solve a number of fundamental problems, which will undoubtedly contribute to the development of a general theory of law and state, the history of law and individual sections of law. From this point of view, the theoretical significance of the dissertation lies in the fact that the subject of scientific research is the judicial precedent, the legal grounds for its application, contradictions and gaps regarding the precedent in the legislative system and in judicial practice, a number of scientific proposals have been developed for their adjustment, which have not only theoretical, but also practical and applicable significance. The practical significance of the dissertation is determined by the fact that its results can be applied during scientific and research activities, in law-making and law-enforcement spheres, in judicial practice, in training courses, lectures and seminars on the theory and history of law and state, and in some branches of jurisprudence, as well as during the courses on retraining and further training of the relevant law enforcement bodies.

This dissertation can also be useful in subsequent scientific research of legal activities for practicing lawyers and scientists, as well as for interested persons.